ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

ԱՆԱԿԼԻԱՅՈՒՄ ՄԵՆՔ ՁԵՌՔ ԵՆՔ ԲԵՐՈՒՄ ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ծովափնյա, գեղատեսիլ առողջարան Անակլիան, որ գտնվում է Աբխազիայի վարչական սահմանի մոտակայքում, վերջին տարիներին, դարձել է նաեւ Վրաստանի տարբեր տարածաշրջանների դպրոցականների հաճելի վայրը: Այստեղ՝ Զուգդիդիի մունիցիպալիտետի՝ „ցոմազլոն ցանաչո„ («Ապագայի ճամբար») անունը կրող դպրոցական ճամբարում, իրենց ամառային հանգիստն են անցկացնում երկրի հազարավոր դեռահասներ: Վրաստանի 2200 հանրային յուրաքանչյուր դպրոցից տարին միայն մեկ աշակերտի է վիճակված դառնալ «Ապագայի ճամբարի» սան: Այդ եզակիների շարքերում մշտապես լինում են նաեւ Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի, Թբիլիսիի հայկական, ադրբեջանական եւ ռուսական հանրային դպրոցների աշակերտներ, ովքեր, հայրենի բնության այս գողտրիկ գրկում, ոչ միայն վայելում են նրա անկրկնելի գեղեցկությունը, այլեւ սովորում են դառնալ իսկական հայրենասեր, սիրել հարազատ հայրենիքը, սիրել աշխարհն ու մարդկանց, գնահատել կյանքի ճշմարիտ արժեքները...

Մենք զրուցեցինք Անակլիայից այս օրերին վերադարձած Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Միլենա Պետրոսյանի հետ, ով՝ շնորհիվ ուսման մեջ ցուցաբերած առաջադիմության, արժանացել էր դառնալ ճամբարի սանը:

- Տան ազատ նիստուկացից հետո՝ ճամբարի ռեժիմին հարմարվելը դժվար չէ՞ր քեզ համար, Միլենա:

- Սկզբում դժվար էր հարմարվելը, հատկապես դժվարանում էի առավոտ վաղ վեր կենալ, բայց հետզհետե ընտելացա եւ սկսեցի սեփական մաշկիս վրա զգալ վաղ արթնանալու, ընդհանրապես՝ ճամբարային ռեժիմի հաճույքն ու առավելությունը:

- Իսկ հիմա՝ վերադարձից հետո, քո մեջ որեւէ փոփոխություն զգո՞ւմ ես:

- Տանեցիները հաճելի զարմանքով ուրախանում են, որ առաջինն եմ անկողնուց վեր կենում, ասում են, որ ավելի կազմակերպված եմ դարձել, որ իմ մեջ զարգացել է պատասխանատվության զգացումը, էլի լավ բաներ, որ նախկինում չունեի: Նույնիսկ ընկերներս են իմ բնավորության մեջ փոփոխություններ նկատում...

- Դու, հավանաբար, ընկերներ ես ձեռք բերել:

- Մինչ ճամբար գնալը՝ կարծում էի, որ մեր երկու երկրների հասակակիցներն իրարից շատ բանով են տարբերվում: Բայց այնտեղ ինձ համար պարզ դարձավ, որ մենք շատ նման ենք իրար: Եվ այժմ, ճամբարի շնորհիվ, ունեմ բազում վրացի ընկերներ, որոնց հետ շփվում եւ արդեն ընկերություն եմ անում: Մենք արդեն հասցրել ենք կարծիքներ փոխանակել մեր ապագա մասնագիտության ընտրության, սիրո, ընտանիքի, տեսած կինոնկարների եւ շատ այլ հարցերի մասին, եւ դա անչափ հետաքրքիր ու հաճելի է:

- Ի՞նչն է քեզ ամենից շատ դուր եկել ճամբարային կյանքում:

- Ինձ դուր եկան ինչպես մտավոր խաղերը, այնպես էլ՝ մարզական մրցույթները, որոնք անց էին կացվում գրեթե ամեն օր: Ցանկացած միջոցառում, ցանկացած մարզական մրցույթ, անկախ արդյունքներից, անկախ քո մասնակցության չափից, ուրախություն էր պարգեւում, որովհետեւ մեզ բոլորիս՝ հայ, վրացի, ադրբեջանցի, օս, աբխազ, եզդի... համակում էր համախմբվածության, միասնության շատ հաճելի զգացումը:

- Ո՞ր միջոցառումն է առավելապես տպավորվել քեզանում:

- Բոլորն էլ հետաքրքիր էին, բայց ամենատպավորիչը եւ հիշելին, երեւի, հրաժեշտի միջոցառումն էր, որի ժամանակ բեմադրություններով ներկայացվեցին Վրաստանի տարբեր մարզերի՝ այդ թվում նաեւ Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանները ու նրանց բնորոշ նիստուկացը:

- Եվ ի՞նչ զգացումով հրաժեշտ տվեցիր Անակլիային...

- Ափսոսանքի զգացումով: Եթե հնարավորություն տրվի նորից գնալ ճամբար, ես մեծ սիրով եւ ուրախությամբ նորից կգնամ Անակլիա:

Օգտվելով այս առիթից՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությանը եւ մեր դպրոցի տնօրենին՝ ինձ պարգեւած այդ անմոռանալի օրերի եւ նոր ընկերներիս համար:

Զրուցեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՎԻԶԱ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԾԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԱՊՐՈՂ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմի նախականխման եւ մոնիտորինգի դեպարտամենտի ներկայացուցիչը՝ անցկացրեց Եվրամիության երկրների տարածքում ապօրինաբար ապրող Վրաստանի քաղաքացիների վերադարձման համատեղ գործողության մոնիտորինգ:

Նախականխման եւ մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցը Թբիլիսիի միջազգային օդանավակայանից մեկնեց Դյուսելդորֆ եւ Աթենք, որտեղ ներկա գտնվեց Եվրոպայի տարբեր երկրներից Վրաստանի 86 քաղաքացիների վերադարձման գործընթացին:

Դյուսելդորֆում եւ Աթենքում, Գերմանիայի եւ Հունաստանի սահմանային ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության խմբին հանձնեց հայրենիք վերադարձվելու ենթակա անձանց: Վերոնշյալ գործողությունը համակարգում էր Եվրամիության անդամ երկրների արտաքին սահմանների օպերատիվ համագործակցության կազմակերպման եվրոպական «Ֆրոնտեքս» գործակալությունը:

Եվրամիության երկրների տարածքում ապօրինաբար ապրող Վրաստանի 86 քաղաքացիները օգոստոսի 16-ին վերադարձվեցին հայրենիք:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ 43-ՐԴՆ Է

Վերջերս հեռուստատեսությամբ տեղեկացա, որ կյանքի միջին տեւողությունն ավելացել է: Յանկալի կլիներ իմանալ, կա՞ն, արդյոք, կյանքի միջին տեւողության վերաբերյալ պաշտոնական տվյալներ առանձին երկրներում:

Հ.Սիմոնյան

Ախալքալաքի

Միավորված Ազգերի Կազմակերպության պաշտոնական տվյալներով, 192 երկրների մեջ, կյանքի տեւողության տեսանկյունից, Վրաստանը 43-րդ տեղում է: Ըստ այդ տվյալների, Վրաստանում կյանքի միջին տեւողությունը կազմում է տղամարդկանց մոտ՝ 73, իսկ կանանց մոտ՝ 81:

Այդ վարկանիշով՝ Հայաստանը, կյանքի միջին տեւողությամբ, 92 երկրների մեջ զբաղեցնում է 89-րդ տեղը:

ՄԱԿ-ի տվյալներով, կյանքի տեւողության տեսանկյունից, վարկանիշային աղյուսակը գլխավորում են Անդորրան, Ճապոնիան, Սան Մարինոն, Սինգապուրը եւ Ֆրանսիան: Այստեղ կյանքի միջին տեւողությունը կազմում է 82-87 տարի:

Վարկանիշային աղյուսակում Ռուսաստանը զբաղեցնում է 129-րդ տեղը, Թուրքիան՝ 80-րդը, Ադրբեջանը՝ 126-րդ տեղը:

Վերոնշյալ ցուցակը եզրափակում են աֆրիկյան երկրները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԵՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ՝ ԼՈՒՐՋ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ներկայիս տնտեսական բարդությունների ֆոնի վրա՝ առաջնային պլան են առանձին հիմնախնդիրներ, որոնք նախկինում այնքան էլ նկատելի չէին: Խոսքը վերաբերում է մենությանն ու հասարակական մեկուսացմանը: Հետաքրքիր է, մասնագետներն ինչպե՞ս են գնահատում այդ գործոնների ազդեցությունը մարդկանց վրա:

Ա.Կարապետյան

Մառնեուլի

Մենությունն ու սոցիալական մեկուսացումն ավելի մեծ սպառնալիք են մարդու համար, քան ճարպակալումը: Այս եզրակացությանն են հանգել Բրիգամ Յանգի համալսարանի (ԱՄՆ) հոգեբանները: Նրանց կարծիքով՝ բնակչության վրա այս գործոնների ազդեցությունը տարեցտարի աճում է եւ կարող է ազգային հիմնախնդրի վերածվել: Այս մասին գիտնականները հայտնել են ԱՄՆ-ի հոգեբանական ասոցիացիայի 125-րդ ամենամյա կոնվենցիայում: Հետազոտության մամուլի տեղեկագիրը հրապարակված է EurekAlert կայքում:

Փորձագետների խոսքով՝ այլ մարդկանց հետ փոխհարաբերությունները մարդու հիմնարար պահանջն է, որը կարեւոր է ինչպես հոգեբանական բարեկեցության, այնպես էլ՝ գոյատեւման համար: Loneliness Study հետազոտության տվյալներով, որը կատարել է AARP ոչ առեւտրային կազմակերպությունը, 45-ից բարձր տարիքի 42,6 միլիոն ամերիկացիներ տառապում են խրոնիկական մենությունից: 2014 թվականի մարդահամարի արդյունքների համաձայն, բնակչության ավելի քան մեկ քառորդն ապրում է մենության մեջ, իսկ քաղաքացիների ավելի քան կեսն ամուսնացած չէ: Գիտնականները կատարել են երկու մետավերլուծություն, որոնցից յուրաքանչյուրում միավորվել են տասնյակ հետազոտությունների արդյունքներ: Առաջինը ներառում է 148 գիտական աշխատություններ, որոնց մասնակցել են, ընդհանուր առմամբ, 300 հազար կամավորներ: Պարզվել է, որ ամուր սոցիալական կապերը նպաստում են վաղ մահվան ռիսկի 50-տոկոսանոց նվազմանը: Երկրորդ մետավերլուծությունում ուսումնասիրվել են 70 հետազոտությունների արդյունքները՝ Հյուսիսային Ամերիկայից, Եվրոպայից, Ասիայից եւ Ավստրալիայից 3,4 միլիոն մարդու մասնակցությամբ: Գիտնականների եզրակացությունների համաձայն, սոցիալական մեկուսացումը կամ մենությունը վաղ մահվան ռիսկը մեծացնում են ավելի մեծ չափով, քան այլ գործոններ, ներառյալ՝ ճարպակալումը:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ԿԱՆԽԱԳՈՒՇԱԿՈՒՄ

ՏԱՊԸ՝ ՄԱՀՎԱՆ ԿԱՆԽՈՐՈՇԻ՞Չ

Մինչեւ 21-րդ դարի վերջը՝ էքստրեմալ եղանակային պայմանների զոհերի թիվը կարող է տարեկան 3 հազարից ավելանալ մինչեւ 150 հազար: Այս եզրակացության են եկել գիտնականների միջազգային խումբը, որոնք իրենց հետազոտությունների արդյունքները հրապարակել են The Lancet Planetary Health հանդեսում: Այդ մասին հաղորդվում է Phys.org կայքի մամուլի տեղեկագրում:

Հետազոտողների կարծիքով, եթե միջոցներ չձեռնարկվեն գլոբալ ջերմաստիճանների կասեցման ուղղությամբ, ապա, մինչեւ 2100 թվականը, մոտավորապես, 350 մլն եվրոպացիներ կտառապեն վտանգավոր կլիմայական պայմաններից: Ընդ որում՝ էքստրեմալ եղանակից մահվան դեպքերի 99 տոկոսը կապված կլինի տապի հետ: Մասնագետները վերլուծել են 1981 թվականից մինչեւ 2010 թվականն ընկած 30-ամյա ժամանակաշրջանի կլիմայական տվյալները: Նրանք դրանք համեմատել են բնակչության աճի եւ միգրացիայի կանխատեսումների, ինչպես նաեւ՝ ապագա եղանակային պայմանների կանխատեսումների, այդ թվում՝ անոմալ շոգի, երաշտների, անտառային հրդեհների, ջրհեղեղների ու փոթորիկների հաճախականության հետ:

Ուսումնասիրությունների համաձայն, եթե, գլոբալ տաքացման արդյունքում, Երկիրը ջերմանա երկու աստիճանով, ապա օդի ջերմաստիճանի աճից մահացությունը կաճի 5400 տոկոսով, առափնյա տարածքների հեղեղումներից՝ 3780 տոկոսով, անտառային հրդեհներից՝ 20 տոկոսով: Մարդիկ կսկսեն ավելի քիչ մահանալ ցրտերից, բայց դա չի հավասարակշռի իրադրությունը:

ԳԼՈԲԱԼ ՏԱՔԱՑՈՒՄԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ ՎԻԹԽԱՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ

ԱՄՆ-ում շուրջ 1,9 մլն շենքեր ջրասույզ կլինեն այն դեպքում, եթե Համաշխարհային օվկիանոսի մակարդակը մինչեւ 2100 թվականը բարձրանա 2 մետրով, եւ այդժամ, կորուստները կարող են հասնել 882 մլրդ դոլարի: Այս կանխատեսմամբ հանդես են եկել Zillow Research գործակալության փորձագետները, որոնք զբաղվում են՝ անշարժ գույքի շուկայի իրադրության վերլուծությամբ:

Նրանք օգտագործել են օվկիանոսների եւ մթնոլորտի խնդիրների ազգային վարչության տվյալները եւ եկել՝ այն եզրակացության, որ կլիմայի գլոբալ տաքացումից առավել մեծ չափով կտուժեն ԱՄՆ արեւելյան ափի նահանգները, առանձնապես՝ Ֆլորիդայի նահանգը:

Ըստ նրանց գնահատումների, այնտեղ կհեղեղվի 413 մլրդ դոլարի ընդհանուր արժողությամբ 943 հազար 411 տուն: Ֆորտ Լոդերդեյլում, ըստ կանխատեսման, ջրի տակ կհայտնվի 38 հազար տուն, Մայամի-Բիչում՝ 37 հազար 500 տուն: Զգալի կորուստներ են սպառնում Նյու Ջերսիի նահանգին, որտեղ խորտակման սպառնալիքի տակ է հայտնվել 190 հազար 429 տուն, Հարավային Կարոլինային՝ գրեթե 84 հազար շենք, եւ Հյուսիսային Կարոլինային՝ 57 հազար շենք:

Նյու Յորքի նահանգում, օվկիանոսի մակարդակի բարձրանալու հետեւանքով, ջրի տակ կարող է հայտնվել 96 հազար 708 շենք, եւ նահանգի իշխանություններն արդեն սկսել են միջոցներ ձեռնարկել՝ սպառնալիքի տակ հայտնված շրջանների պաշտպանության համար. ընթացիկ տարում Մանհեթենի արեւելյան ափերի ամրացման աշխատանքներ կսկսվեն: Այնտեղ կառուցվելու է Big U անվանումն ստացած հիդրոտեխնիկական շինություն՝ բետոնե ամբարտակ՝ 3 մետր բարձրությամբ եւ մոտավորապես 3 կիլոմետր երկարությամբ:

- Մանհեթենը խորտակման սպառնալիքին չի ենթարկվի դեռ շատ երկար ժամանակ,- այդ կապակցությամբ նշել է Climate Central ոչ առեւտրային կազմակերպության ներկայացուցիչ Բենջամին Ստրաուսը: «Այդ ոչ մեծ տարածքում այնքան զգալի նյութական ռեսուրսներ են կենտրոնացված, որ կարելի է վստահ լինել, որ շատ լուրջ ներդրումներ կներգրավվեն դրանք պաշտպանելու համար»,- հավելել է նա:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Սիրենք կյանքը, սիրենք լուսավորը, սիրենք սերը եւ մեր գործով արդարացնենք բնության վստահությունը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
(1886-1972)
Հայ նկարիչ

Մեր տենչանքը մենք չենք գտնում՝ տանջում է մեզ նախանձն անբավ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԱՎՃԱՎԱՁԵ
(1786-1846)
Վրաց բանաստեղծ

Գիտենալը քիչ է, հարկավոր է նաեւ կիրառել: Ցանկանալը քիչ է, հարկավոր է նաեւ գործել:

ՅՈՀԱՆ ԳՅՈԹԵ
(1749-1832)
Գերմանացի բանաստեղծ, բնագետ

Մարդկային իմաստության ամենաբարձր աստիճանը՝ հանգամանքներին հարմարվել կարողանալն է եւ արտաքին ամպրոպների նկատմամբ հանգստություն պահպանելը:

ԴԱՆԻԵԼ ԴԵՖՈ
(1660-1731)
Անգլիացի գրող

Հարկավոր է առողջանալ, քանի դեռ բժիշկները չեն սկսել բուժել:

Լ.ՍԱՀԱԿՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *- Ինչպե՞ս եք նշում ծննդյան օրերը ձեր ընտանիքում:*

- Կնոջս ծնունդը՝ ռեստորանում, իմը՝ կարմիր գրիչով օրացույցի վրա:

☺ *Կինը՝ ընկերուհուն.*

- Ես մինչեւ երեկ չգիտեի, թե իմ ամուսինը որտեղ է լինում գիշերները, երեկ եկա տուն, տեսնեմ, չէ, տանն է լինում...

☺ *Շոտլանդացի տղան խանութից մեղր է գնում, լցնում է ամանի մեջ:*

- Ինձ մոտ փող չկա, վաղը հայրս կվճարի:

- Ես ձեզ գիտեմ,- ասում է խանութպանը, եւ մեղրը դատարկում է:

Տղան նայում է ամանին.

- Հայրս ճիշտ էր ասում՝ երկու կտոր հացի համար բավական է:

☺ *Դեղատանը մի մարդ ասում է.*

- Բարի եղեք, երկու շիշ էլ հագի դեղ տվեք:

- Ձեր երեխան մի շիշը լրիվ խմե՞ց:

- Ոչ, որպեսզի մի գդալ խմի՝ մի գդալ էլ խմում ենք ես, կինս, աղջիկս, տատիկը, պապիկը, պապիկի քույրը եւ կողքի հարեւանը:

☺ *- Աստված իմ, հավատս չի գալիս, շուտով մենք երջանիկ կլինենք:*

- Հա, վերջապես, ընդամենը երկու շաբաթ մնաց:

- Բայց ոչ մի կերպ չեմ հասկանում՝ ինչո՞ւ են այսքան ձգձգում: Մի՞թե չէր կարելի դա հենց վաղն անել:

- Հանգստացիր, պետք չէ տաքանալ: Ախր էս քաղաքում հո միայն մենք չե՞նք բաժանվում..

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Օգոստոսի 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի մոտ տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված Հայաստան-սփյուռք վեցերորդ համաժողովի եւ Համահայկական խորհրդի ձեւավորման նախապատրաստման աշխատանքներին:

Համահայկական խորհրդի ձեւավորման վերաբերյալ առկա հիմնական մոտեցումների եւ այդ մարմնի կազմավորման մեխանիզմների վերաբերյալ զեկուցել է Սահմանադրական դատարանի նախագահ, կազմակերպչական հանձնախմբի աշխատանքների համակարգման պատասխանատուներից Գագիկ Հարությունյանը: Հիշյալ մոտեցումներն ու մեխանիզմները քննարկման առարկա կդառնան ս.թ. սեպտեմբերի 18-20-ը կայանալիք Հայաստան-սփյուռք 6-րդ համաժողովում:

Հաշվի առնելով համահայկական նոր կառույցի վերաբերյալ նախորդ տարիների քննարկումները՝ Հանրապետության նախագահը հանձնարարել է նախապատրաստել Համահայկական խորհրդի ձեւավորման նպատակների, անդամակցության չափանիշների, 2018թ. կայանալիք հիմնադիր նիստի օրակարգի եւ աշխատակարգի նախագծերը՝ շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ սփյուռքում գործող կազմակերպությունների ու կառույցների հետ համապատասխան քննարկումների արդյունքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 17-ին Հայաստանի նախագահի մոտ կայացած աշխատանքային հանդիպման ժամանակ՝ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը զեկուցեց պետական աջակցության ծրագրում ընդգրկված մարզաձեւերում Հայաստանի հավաքական թիմերի մարզիկների նվաճումները Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում, այդ ձեռքբերումներն ամրապնդելու նպատակով ձեռնարկվելիք հետագա միջոցառումները, ինչպես նաեւ մասսայական սպորտի, մանկապատանեկան սպորտի եւ երիտասարդական պետական քաղաքականության ոլորտներում իրականացված աշխատանքների, հիշյալ ոլորտներում առկա խնդիրների եւ դրանց լուծման նպատակով ակնկալվող համակարգային փոփոխությունների ու նոր ծրագրերի ներդրման մասին:

Հրաչյա Ռոստոմյանը ներկայացրեց, որ նախարարության կողմից, ի թիվս ընթացիկ ծրագրերի, մշակվել եւ իրականացվում են եւս 7 նոր մարզական մասսայական ծրագրեր, որոնցում ընդգրկված են տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչներ եւ բոլոր տարիքային խմբերը՝ սկսած նախադպրոցական տարիքից մինչեւ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, խնամքի ու պաշտպանության կարիք ունեցող երեխաներ:

Սերժ Սարգսյանը հանձնարարեց ուշադրության կենտրոնում պահել նաեւ հանրապետությունում սպորտային տուրիզմի զարգացման հարցը՝ արագացնել «Սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգ»-ի մշակման աշխատանքները եւ քննարկել այդ նպատակով լեռնադահուկային, ջրային եւ համապատասխան այլ մարզաձեւերի զարգացման խթանման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, ինչպես նաեւ արդեն իսկ առկա պայմանների կատարելագործման հնարավորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՃՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը, օգոստոսի 14-ին, Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի աշխատանքներին՝ նեղ եւ ընդլայնված կազմերով: Մինչ նիստի մեկնարկը՝ պատվիրակությունների ղեկավարներին ընդունեց Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը:

Նիստի ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրների վարչապետերը քննարկեցին տնտեսության, մաքսային, էներգետիկ, տրանսպորտային եւ այլ ուղղություններով ինտեգրացիոն փոխգործակցության խորացմանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ թվային օրակարգին, անդամ երկրների էլեկտրաէներգետիկ շուկաների ինտեգրմանը, ավիացիոն ոլորտում համագործակցությանը: ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ համաձայնագրի բանակցությունների ընթացքին, աշխատողների կենսաթոշակային ապահովմանը, ինչպես նաեւ ազգային եւ միջազգային վարորդական իրավունքների փոխադարձ ճանաչմանն առնչվող խնդիրները եւ մի շարք այլ հարցեր նույնպես եղել են Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամների դիտարկման թեմաները:

Եվրասիական միջկառավարական խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա Հայաստանում:

Այցի շրջանակներում Հայաստանի նախագահ Կարեն Կարապետյանը հանդիպում ունեցավ ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ:

Հանդիպման սկզբում Դմիտրի Մեդվեդեւն Հայաստանի վարչապետին շնորհավորեց ծննդյան օրվա առթիվ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ տնտեսանկան համագործակցության խրախուսման հետ առնչվող հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օգոստոսի 17-ին Հայաստանի եւ Իրանի միջեւ ստորագրվել է ազատ տնտեսական գոտիների միջեւ համագործակցության հուշագիր:

Այն ստորագրել են Հայաստանի տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը եւ Իրանի նախագահի խորհրդական, Առեւտրական ազատ գոտիների համադրման խորհրդի քարտուղար Աբբաս Թորքանը:

Հուշագրի նպատակն է՝ սահմանել Հայաստանի եւ Իրանի միջեւ ազատ տնտեսական գոտիների ոլորտում համագործակցության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ ապահովել «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ «Արաս» տնտեսական հատուկ գոտու առաջմղումն ու սերտ փոխգործակցությունը վերջիններիս զարգացման նպատակով: Ի թիվս այս նպատակների՝ հուշագրի համաձայն՝ կհաստատվեն կապեր՝ «Մեղրի» ազատ տնտեսական գոտու եւ «Արաս» հատուկ տնտեսական գոտու տարածքներում գործունեություն իրականացնող ընկերությունների, ինչպես նաեւ գոտիները կառավարող մարմինների եւ պետական գերատեսչությունների միջեւ:

Նախօրեին, Սուրեն Կարայանի եւ Աբբաս Թորքանի նախաձեռնությամբ, ձեւավորվել էր երեք աշխատանքային խումբ՝ զբոսաշրջության, ազատ տնտեսական գոտիների եւ արդյունաբերության ոլորտներում երկու երկրների համագործակցության հնարավորությունները քննարկելու եւ գործնական առաջարկներ մշակելու նպատակով:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի մոտ տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում օգոստոսի 12-ին բռնկված խոշոր կրակի հրդեհաշիջման ընթացքի, ինչպես նաեւ հանրապետության ամբողջ տարածքում տեւական ջերմային բարձր ֆոնի եւ տեղումների բացակայության պայմաններում անտառամերձ ու անտառային գոտիներում առաջացած հրդեհավտանգ իրավիճակի պատշաճ վերահսկողության, կանխարգելիչ աշխատանքների իրականացման, առաջացած հրդեհների պատճառների բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների, բնությանը եւ գյուղացիական տնտեսություններին հասցված վնասի ուսումնասիրման, դրա վերականգնման հնարավորությունների վերաբերյալ: Քննարկվել է նաեւ ստեղծված իրավիճակում նոր միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:

Խորհրդակցության արդյունքներով Հանրապետության նախագահը հանձնարարել է շարունակելի իրավիճակը պահել խիստ հսկողության տակ եւ պարբերաբար զեկուցել հրդեհաշիջման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ տեղի է ունեցել տնտեսական կառավարման համակարգի բարելավմանն ուղղված հերթական խորհրդակցությունը: Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի եւ «Արար» հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրել են Հայաստանի գյուղատնտեսության եւ Տնտեսական զարգացման ու ներդրումների նախարարությունների կառուցվածքային բարեփոխումներն ու առաջարկությունները, որոնք միտված են գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ համաչայն թիրախային չափորոշիչների:

Առաջարկությունները մշակվել են՝ հաշվի առնելով նշված գերատեսչությունների ախտորոշման արդյունքները եւ ֆունկցիոնալ ստորաբաժանումների գործունեության խոչընդոտները:

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿԱԶՄՈՒՄ Է 11 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ

«Բիզնես Գրուզիայի» տվյալներով՝ Վրաստանը Հայաստանին պարտք է 11 միլիոն դոլար:

Նշենք, որ Վրաստանի արտաքին պետպարտքը եւ պետական երաշխիքի տակ վերցված վարկերը, 2017 թվականի հուլիսի 31-ի դրությամբ, կազմել են 4,9 միլիարդ դոլար:

Վրաստանի պետպարտքը Ադրբեջանին կազմում է 9 միլիոն 342 հազար դոլար:

Ինչ վերաբերում է Գերմանիային, Վրաստանը նրան պարտք է 284 միլիոն դոլար, Ճապոնիային՝ 208 միլիոն դոլար, Ֆրանսիային՝ մոտ 114 միլիոն դոլար:

Թուրքիային եւ Ռուսաստանին Վրաստանի պետպարտքը, կազմում է, համապատասխանաբար, 18 միլիոն եւ 75 միլիոն դոլար:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(18 օգոստոսի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	477,20	479,80
ԵՎՐՈ	558,00	564,50
ՌՈՒԲԼԻ	7,99	8,15

Օգոստոսի 11-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ՁԻՎԱՆԻ - 171

ԵՐԳԻ ԵՎ ՊՈԵԶԻԱՅԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏՈՆ՝ ԿԱՐԾԱԽՈՒՄ



Օգոստոսի 27-ին, ժամը 12-ին Ախալքալաքիի մունիցիպալիտետի Կարծախ գյուղում կտոնվի հայ աշուղական երգարվեստի երեւելիներից եւ հիմնադիրներից Ձիվանու (Սերոբ Լեւոնյան, 1846-1909) ավանդական օրը: Այս տարի եւս, Աշուղի ծննդավայրը կհյուրընկալի Վրաստանից, Հայաստանից ժամանած գրողների, աշուղական երգի մենակատարների, հասարակական գործիչների եւ արվեստի սիրահարների:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է



Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ավտոճանապարհների դեպարտամենտը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը, ներկա դրությամբ, բաց է տրանսպորտային բոլոր միջոցների համար:

Դարիալի կիրճում ճանապարհային երթեւեկությունը կասեցվել էր Վրաստանի տարածքում Թերեք գետի ջրի մակարդակի աճի պատճառով: Ավելի ուշ, Շրջակա միջավայրի Ազգային գործակալությունը հաղորդել էր, որ Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ճանապարհի վրա կան սելավային փլվածքներ:

ՆՈՐ ՕՐԵՆՔ

ԱՂՄԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԴԵՆ ՏՈՒԳԱՆՎԵԼ Է ԵՐԵՔ ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Օգոստոսի 15-ից ուժի մեջ մտան Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքի փոփոխությունները՝ ըստ որի աղմկելու համար սահմանված են տուգանքներ: Առաջին անգամ օրենքի խախտումը կհանգեցնի զգուշացման: Կրկնական խախտման դեպքում ֆիզիկական անձի համար սահմանված է 150 լարիի տուգանք, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ 500 լարի: Հաջորդող յուրաքանչյուր խախտման դեպքում՝ տուգանքը կրկնապատկվում է: Հետաքրքրական է, որ օրենքի կիրարկումից հետո անցած երեք օրվա ընթացքում արդեն տուգանվել է շուրջ երեք հազար մարդ:

Գիշերային ժամերին արգելվում է նաեւ հրավառության տեխնիկայի օգտագործում: Բացառություն են կազմում միայն Նոր տարին, հին Նոր տարին, ապրիլի 9-ը եւ Վրաստանի անկախության օրը: Օրենքի այդ կետերի խախտողներին, ֆիզիկական անձանց դեպքում, սպառնում է 150 լարիի տուգանք, իսկ իրավաբանական անձանց՝ 500 լարի: Իրավախախտման կրկնության դեպքում՝ տուգանքի չափը կրկնապապատկվում է:

Օրենքի համաձայն, գիշերային ժամեր են սահմանված 23.00-07.00:

Ինչ վերաբերում է աղմուկի թույլատրելի չափին, ապա, դրա շուրջ աշխատում է Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը: Նախնական տեղեկատվությամբ, բնակարանում եւ տանը աղմուկի առավելագույն չափը ցերեկը կազմելու է 35 դեցիբել, իսկ գիշերը՝ 30 դեցիբել: Առեւտրական օբյեկտներում աղմուկի թույլատրելի չափը կազմում է 55 դեցիբել, բժշկական հաստատություններում՝ 40, իսկ ուսումնական հաստատություններում՝ 35 դեցիբել:

Ինչ վերաբերում է բարերում եւ ռեստորաններում աղմուկի չափին, ապա դա կախված է հարեւան բնակելի տներից այդ օբյեկտների հեռավորությունից: Ոչ բարձրահարկ շենքից ոչ հեռու գտնվող բարում կամ ռեստորանում ցերեկը աղմուկի թույլատրելի չափը կազմում է 50 դեցիբել, գիշերը՝ մինչեւ 40 դեցիբել: Բարձրահարկ շենքի հարեւանության դեպքում՝ ցերեկը՝ 55, գիշերը՝ 45 դեցիբել:

ՍՊՈՐՏ

ՖԻՖԱ-Ն ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան ներկայացրել է տարվա լավագույն ֆուտբոլիստի կոչման հավակնորդներին:

ՖԻՖԱ-ի ներկայացրած ցուցակում ընդգրկվել են Պիեռ-էմերիկ Օբամեյանգը («Բորուսիա» Դորտմունդ), Լեոնարդո Բոնուչիին («Յուվենտուս»/«Միլան»), Ջանլուիջի Բուֆոնը («Յուվենտուս»), Դանիել Կարվախալը («Ռեալ»), Կրիշտիանու Ռոնալդուն («Ռեալ»), Պաուլո Դիբալան (Յուվենտուս»), Անտուան Գրիզմանը («Աթլետիկո»), Էդեն Ազարը («Չելսի»), Զլատան Իբրահիմովիչը («Մանչեսթեր Յունայթեդ»), Անդրես Ինիեստան («Բարսելոնա»), Հարի Քեյնը («Տոտենհեմ»), Նգոլո Կանտեն («Չելսի»), Տոնի Կրոսը («Ռեալ»), Ռոբերտ Լեւանդովսկին («Բավարիա»), Մարսելոն («Ռեալ»), Լիոնել Մեսսին («Բարսելոնա»), Լուկա Մոդրիչը («Ռեալ»), Կեյլոր Նավասը («Ռեալ»), Մանուել Նոյերը («Բավարիա»), Նեյմարը («Բարսելոնա»/ՊՍԺ), Սերխիո Ռամոսը («Ռեալ»), Ալեքսիս Սանչեսը («Արսենալ»), Լուիս Սուարեսը («Բարսելոնա») եւ Արտուրո Վիդալը («Բավարիա»):

Լավագույնի ընտրության քվեարկությանը կմասնակցեն ազգային թիմերի մարզիչները եւ ավագները, ՁԼՄ ներկայացուցիչները: Այն կմեկնարկի օգոստոսի 21-ին եւ կավարտվի սեպտեմբերի 7-ին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Սարդարապատի ճակատամարտի մասնակից գրող, «Ալպիական մանուշակ» պատմվածքի հեղինակը: 6.Ավ.Իսահակյանին տրված պատվանունը: 10.Այս անունը հունարեն նշանակում է թագավոր: 11.Գրող Արամ Թովմասյանի կեղծանունը՝ Լեռ ...: 12.Կաթնամթերքի տեսակ: 13.Ռուս երգչուհի ... Ցոյ: 17.Բնակչությանը հարկավոր է մաքուր ...: 18.Ալ.Պուշկինի դայակը, որին նա անվանել է «դաժան օրերի ընկերուհի»: 20.Աշխարհահռչակ օպերային թատրոն Իտալիայում՝ ... Սկալա: 22.Ծիածանի աստվածուհին: 23.Խոտի ցողունների վրա «նվագող», թռչող միջատ: 25.Երեխա, զավակ: 28.Ճապոնական ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչ: 29.Համաշխարհային ռոքի աստղ ... Գիլան: 30.Շիտակ, ճշմարիտ, իրավացի: 32.Դժվար, խրթին: 33.Մերձարեւադարձային միրգ, պտուղ: 35.Հարցական դերանուն: 36.Խոշոր քաղաք Ուրալում: 37.Շյուղ, ճյուղ, բողբոջ: 38.Ստորադասական շաղկապ: 39.Դրամատուն, գումարը պահելու տեղ: 40.Իտալացի մեծ կոմպոզիտոր Վերդիի օպերաներից: 42.«Դեպի ..., սարն ի ..., անվերջ է ուղիս» (Սարմեն): 43.Սիբիրի գետերից: 47.Ռուսական Սեղ ցար: 48.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի դերասանուհի ... Ղարաջյան: 50.Թանկարժեք քար: 53.Պետություն Աֆրիկայում: 55.Հացաբույսի խուրձ: 56.Վրաց գրող Ն.Դումբաձեի հերոսներից: 58.Անթարթ աչքերով: 59.Ես՝ ..., դու՝ քո: 60.Կապուտան կամ ... լիճ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հայ մեծ վիպասան Ռաֆֆու վեպերից «... Բեկ»: 2.Վրաստանի Գորի քաղաքում ծնված հեղափոխական, Վ.Լենինի զինակիցը: 3.Գանձայում ծնված պոետի սիրած կինը՝ ... Թումանյան: 4.Ռուսաստանի թագավորները կոչվել են: 5.Վրաց երգչուհի ... Գուրցկաիա: 7.Ֆրանսիացի գրող Դյումայի վեպերից: 8.Հարավամերիկյան պետություն: 9.Հանրահայտ կոմպոզիտոր, «Արշակ Երկրորդ» օպերայի հեղինակ ... Չուխաջյան: 14.Խորհրդային Միության Օլիմպիական չեմպիոն, գեղասահորդուհի ... Ռոդնինա: 15.Հայոց գրի, գրականության, գիտության եւ արվեստի հովանավոր աստվածը: 16.Գյուղ Վրաստանի Մառեռուլիի շրջանում: 17.Ծովափնյա քաղաք Ուկրաինայում: 19.ՀՀ վաստակավոր արտիստուհի ... Ասրյան: 21.Հովհ.Թումանյանի գովերգած լեռը Ջավախեթիի Փարվանա լճի մոտակայքում: 24.Քաղաք Ուկրաինայի Սեւերսկի Դոնեց գետի ափին: 26.Հարյուր տարի: 27.Գետ Հնդկաստանում: 31.Թբիլիսիի Խոջիվանքում թաղված հայ մեծ վիպասանը: 32.Այրող, վառող: 34.Կանանց շախմատի աշխարհի վրաց հնգակի չեմպիոն ... Գափրինդաշվիլի: 39.Մենդելեեւի քիմիական տարրերից 35-րդը: 40.Գ.Սունդուկյանին բանաստեղծություն նվիրած վրաց գրող ... Ծերեթելի: 41.Ֆրանսիացի հանրահայտ գրող: 42.Կարագի տեսակ: 43.ՌԴ դերասանուհի ... Ախուջակովա: 44.Հին աշխարհամաս: 45.Վ.Տերյանի «Երկիր ...» ժողովածուն: 46.Կոպիտ, բռի, վայրենի: 49.Հնդկուհու ազգային տարազը: 51.Հայաստանի Առաջին Հանրապետության ԱԳ նախարար ... Մանուկյան: 52.Աֆրիկյան պետություն: 54.Կղզի Վանա լճում: 58.Մեսրոպյան այբուբենի զինվոր:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նջամենա: 7.Քենակալ: 9.Կոկտեյլ: 10.Ոգեշունչ: 13.Ոպեներ: 16.Տարա: 18.Նինա: 20.Ամեոբա: 23.Ալվան: 25.Մուգ: 27.Դարան: 28.Կեմենի: 29.Տկլոր: 31.Գեշ: 32.Կուտի: 35.Վոլոստ: 36.Լուրթ: 37.Ոսկի: 38.Համ: 41.Ազոխ: 43.Մակետ: 46.Բնիկ: 47.Ֆուծիյամա: 48.Ամիր: 49.Տիպիկ: 50.Թան: 51.Լիզ: 52.Սաստ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անկապ: 3.Եղեռն: 4.Աքլոր: 5.Անգետ: 6.Շլաչ: 8.Կյուրի: 9.Կարկանդակ: 11.Շանթ: 12.Նան: 14.Ենո: 15.Եռալ: 17.Իսակով: 19.Արգիշտի: 21.Եփրատ: 22.Բանտ: 24.Ներողամիտ: 25.Մեգով: 26.Ունես: 30.Կարտոֆիլ: 33.Ուբսունուբ: 34.Իլիական: 39.Մայիս: 40.Դեմիս: 42.Խուրի: 44.Կապա: 45.Տակտ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445